ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2021թ. թիվ_____/Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5.1-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրանց 20 տարին լրանալու օրը:

1) Մանուկ Կարենի Մանուկյանին՝ ծնված 2002 թվականի հունվարի 31-ին (հաշվառման վայրը՝ ք. Երևան, Նորագյուղ, 358 տուն), սովորում է Երևանի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջի ավարտական 3-րդ կուրսում,

2) Նարեկ Նարբեի Չոլաքյանին՝ ծնված 2002 թվականի մարտի 22-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Պետրոզավոդսկ փողոց, 16/1 տուն), սովորում է Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ավարտական 4-րդ կուրսում,

3) Արայիկ Համլետի Մարգարյանին՝ ծնված 2002 թվականի մայիսի 23-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Իսակով 4 փող., 7ա տուն), սովորում է Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ավարտական 4-րդ կուրսում,

4) Բաբկեն Արմենի Արևշատյանին՝ ծնված 2002 թվականի ապրիլի 24-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Հենրիկ Աբրահամյանի փող., 4-րդ շենք, 19 բն.), սովորում է Գավառի Ա.Թամամշևի անվան պետական

գյուղատնտեսական քոլեջի ավարտական 3-րդ կուրսում,

5) Տիգրան Վարուժանի Հարությունյանին՝ ծնված 2002 թվականի ապրիլի 27-ին (հաշվառման վայրը՝ ք. Երևան, Բելինսկի փող, 53 տուն), սովորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ա.Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ավարտական 3-րդ կուրսում,

6) Արթուր Աշոտի Վարդանյանին՝ ծնված 2002 թվականի մարտի 6-ին (հաշվառման վայրը՝ Արմավիրի մարզ, գ. Նորակերտ, Տերյան փող., 4 տուն), սովորում է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ Երևանի քոլեջի ավարտական 3-րդ կուրսում,

7) Աշոտ Գևորգի Մովսիսյանին՝ ծնված 2002 թվականի մայիսի 31-ին (հաշվառման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարմիր, Հովհաննես Շիրազի փող., 110/2 տուն), սովորում է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ Երևանի քոլեջի ավարտական 3-րդ կուրսում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

ՀՀ կառավարության որոշման նախագծում ընդգրկված ՀՀ քաղաքացիները սովորում են Հայաստանի Հանրապետության հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման միջին մասնագիտական կրթական ծրագրով ավարտական կուրսերում և չեն ավարտել պարտադիր հանրակրթական ծրագիրը:

ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված ՀՀ քաղաքացիները ուսումնառությունը ավարտելու են 2022 թվականի մինչև հունիսի 30-ը:

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5.1-րդ մասը՝ առաջարկում եմ վերոհիշյալ ՀՀ քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում: Իրավական ակտի ընդունումը թույլ կտա վերը նշված ուսանողներին ստանալ պարտադիր հանրակրթական կրթություն:

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություն չի առաջացնի:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	02.07.2021թ . Մ-40730-2021
1-ին կետի՝ 8-րդ ենթակետում Գագիկ Մելքոնյանը և 10-րդ ենթակետում Դավիթ Մաթոսյանը 2021թ. ամառային զորակոչի ժամանակ օրենքով սահմանված հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից, իսկ նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում Վոլոդյա Փոլադյանին, 2-րդ ենթակետում Էդգար Առաքելյանին, 11-րդ ենթակետում Ալիկ Բաբայանին և 13-րդ ենթակետում Կարապետ Կարապետյանին 2021թ. ամառային զորակոչի ժամանակ տրվել է օրենքով սահմանված տարկետում համապատասխանաբար 2022թ., 2024թ. և 2023թ. ամառային զորակոչերը և նրանց ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող տրվել տարկետում: Հայտնում եմ նաև, որ Ս. Շոխիկյանը փաստացի հրաժարվել է օգտվել իր տարկետման իրավունքից և ս.թ. ամառային զորակոչի շրջանակներում զորակոչվելու է պարտադիր զինվորական ծառայության, որի կապակցությամբ նրա անունը ենթակա է հանվելու որոշման նախագծի ցանկից:	**Ընդունվել է**
2. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	13.06.2021թ. Մ-43569-2021
1. «Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության	**Ընդունվել է**

2021 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:	